ԱՄՆ-Ի ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՐԿՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ
(1980-ական թվականներ)

Մ. Գ. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայությունն ԱՄՆ-ում համեմատած երկրի այլ էթնիկական խմբերի, օրինակ, լեհերի, հրեաների, իտալացիների, հույների, ռուսների և մյուսների հետ, մեծաթիվ չէ. մոտավոր հաշվումներով այն կազմում է 800 հազար մարդ։ Համայնքը կազմված է ինչպես մինչև 1925 թ. Թուրքիայից ներգաղթած հայերի մի հոծ զանգվածի հաջորդ սերունդներից, այնպես էլ հետագայում՝ XX դ. 60-ական թվականներից մինչև այսօր Մերձավոր և Միջին արևելքից, ինչպես նաև Խորհրդային Հայաստանից ներգաղթած հայերից ու նրանց զավակներից։

Ամերիկահայերը գտնվում են ուծացման տարբեր աստիճանների վրա, ուստի նրանց քաղաքական գիտակցությունը և քաղաքական ակտիվության աստիճանը երկրի հասարակական-քաղաքական կյանքում նույնպես միանշանակ չէ։ Բնական է, որ ԱՄՆ-ի հասարակության մեջ մշակութային ուծացում ապրած ներգաղթյալների երկրորդ և երրորդ սերնդի ներկայացուցիչների քաղաքական գիտակցությունն ու վարքագիծը շատ ավելի «ամերիկացված» է, քան, ասենք, վերջերս ներգաղթածների առաջին սերնդի ներկայացուցիչներինը, որոնք դեռևս լիովին չեն ընկալել ամերիկյան հասարակական-քաղաքական ինստիտուտների գործունեության ձևերն ու մեթոդները, ընդհանուր առմամբ, ամերիկյան քաղաքական համակարգի առանձնահատկությունները։

Հավանաբար, այս հանգամանքով նաև կարելի է բացատրել այն փաստը, որ ամերիկահայերի ընտրական վարքագիծն ընդհանրապես բնութագրվում է պասսիվությամբ, այսինքն ամերիկահայերից շատերն ընդհանրապես չեն մասնակցում ընտրություններին, երկրի քաղաքական կյանքին։ Հաճախ նույնիսկ այն ներգաղթյալները, որոնք ստացել են ամերիկյան քաղաքացիություն և ունեն ընտրելու իրավունք, մեծ մասամբ չեն օգտվում դրանից։

Խոսելով երկրի քաղաքական կյանքին ԱՄՆ-ի հայ էթնիկ խմբի մասնակցության մասին, անհրաժեշտ է անդրադառնալ մի կարևոր իրողության, որը բնութագրում է ամերիկահայ համայնքն այսօր և անմիջականորեն առնչվում է ամերիկահայերի քաղաքական դիրքորոշման հետ։ Որքան էլ ներկայումս տարբեր լինի ամերիկահայերի ուծացման աստիճանը, անխուսափելի է երկրի հասարակական-քաղաքական կյանքում նրանց բոլորի մշակութային ուծացումը։ Այսինքն, ամերիկահայերը կորցնելով իրենց էթնիկ նկարագիրը բնութագրող էթնիկ մշակութային որոշ տարրերը, հետզհետե ընկալում են ամերիկյան մշակութային արժեքները։ Սակայն դրա հետ մեկտեղ, էթնիկ մշակույթի այնպիսի որոշիչ տարրը, ինչպիսին էթնիկ ինքնագիտակցությունն է, ոչ միայն չի կորսվում, այլև որոշակի վերելք է ապրում անգամ ներգաղթյալների երրորդ և հաջորդ սերունդներում։ Այս հանգամանքը հատկանշական է ոչ միայն հայ էթնիկ խմբի, այլև ԱՄՆ-ի մյուս էթնիկ խմբերի համար և թե ամերիկյան, թե խորհրդային գիտնականների յուրաքանչյուր ուսումնասիրության առարկա է։ ԱՄՆ-ում կատարվող գիտական ուսումնասիրություններում առանձին տեղ է հատկացվում երկրի քաղաքական համակարգում էթնիկ փոքրամասնությունների ներգրավման հարցին։ Վերլուծելով դրանց մասնակցությունն ԱՄՆ-ի համազգային և տեղական ընտրություններին, ամերիկյան մի շարք գիտնականներ եզրակացնում են, որ էթնիկ փոքրամասնությունների ընտրական վարքագիծը տարբերվում է ամերիկյան

հասարակության մյուս խմբերի վարքագծից, մի հանգամանք, որ վկայում է այդ փոքրամասնությունների էթնիկ գիտակցության պահպանման մասին[1]։

Էթնիկ փոքրամասնությունների գիտակցությունը պարզորոշ դրսևորվում է ԱՄՆ-ի վարած արտաքին քաղաքականության վերաբերյալ նրանց ունեցած դիրքորոշման մեջ։ Այն դեպքում, երբ ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունն անմիջականորեն կամ կողմնակի առնչվում է այս կամ այն էթնիկ խմբի հայրենիքի հետ, այդ խմբի քաղաքական գործունեությունը երկրում ակտիվանում է՝ հօգուտ արտագնացության երկրի շահերի։ Էթնիկ խմբերը և նրանց կազմակերպությունները հանդես են գալիս որպես ամերիկյան հասարակության, այսպես կոչված, շահագրգռված խմբեր։ Ընդ որում, ի տարբերություն ամերիկյան հասարակության արտաքին քաղաքականությամբ զբաղվող մյուս շահագրգռված խմբերի, էթնիկ խմբերի համար միջազգային հարաբերություններում առաջնահերթ կարող են լինել արտագնացության երկրի ազգային, պետական կամ քաղաքական շահերը։

Էթնիկ խումբը որպես շահագրգռված խումբ հանդես է գալիս առավելապես համազգային ընտրությունների ժամանակ, երբ ԱՄՆ-ի վարած ազգային քաղաքականության հարցերը դառնում են էթնիկ կազմակերպությունների, ընտրողների քաղաքական վարքագծի անկյունաքարը։ Այս ժամանակ է, որ պարզորոշ է ուրվագծվում տվյալ էթնիկ խմբի շահագրգռվածությունն ԱՄՆ-ի վարած արտաքին քաղաքականության հետ կապված այս կամ այն հարցի շուրջ։

1988 թ. ԱՄՆ-ում անցկացված ընտրություններն ի հայտ բերեցին մի շարք հայտանիշ գծեր, որոնք բնութագրում են այսօրվա ամերիկահայ համայնքի քաղաքական գործելաձևը երկրում։

1988 թ. ընտրությունների ժամանակ ամերիկահայ համայնքը հարում էր թե՛ հանրապետական և թե դեմոկրատական կուսակցության թեկնածուներին։ Նախընտրական կամպանիայի հենց սկզբում հայ համայնքը ստեղծեց երկու կուսակցությունների թեկնածուներին աջակցող կոմիտեներ. «Հայերը հօգուտ Բուշի, որպես պրեզիդենտի», «Հայերը հօգուտ Դոլի, որպես պրեզիդենտի» և «Հայերը հօգուտ Դուկակիսի, որպես պրեզիդենտի»։ Մյուս կողմից, վերջին ընտրությունները վկայեցին, որ ամերիկահայ համայնքը էթնիկ միակտուր ընտրական համալիր (բլոկ) չի կազմում։ Մինչդեռ միասնական էթնիկ համալիրի իրողությունը շատ տարածված է ԱՄՆ-ի քաղաքական կյանքում (այս կամ այն էթնիկ խումբն ընտրությունների ժամանակ իր ձայներն ամբողջապես տալիս է կա՛մ հանրապետական, կամ էլ դեմոկրատական կուսակցության թեկնածուներին)։

1988 թ. ընտրությունների ժամանակ ամերակահայերի ընտրական վարքագիծը պայմանավորված էր առաջին հերթին այս կամ այն թեկնածուի նախընտրական պլատֆորմի արտաքին քաղաքականությանը հատկացված մասով։ Հանրապետական կուսակցության թեկնածուներն ամերիկահայերի ձայները ստացան գերազանցապես խորհրդա-ամերիկյան հարաբերություններում հանրապետական վարչակազմի ունեցած հաջողությունների համար։ Քանի որ ամերիկահայերի բացարձակ մեծամասնությունն առավել բարյացակամ է վերաբերվում Խորհրդային Միության վարած արտաքին ու ներքին քաղաքականությանը, կարծելով, որ Հայաստանը կարող է բարգավաճել միայն ու միայն ԽՍՀՄ-ի կազմում։ Մյուս կողմից, ամերիկահայերին անհանգստարնում է Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ի կարևորագույն գործընկերոջ ուժեղացումը։ Այս առումով, ամերիկահայերի մի մասը նպաստում է հանրապետականների ծավալած ստրատեգիական պաշտպանական նախա-

[1] The ethnic factor in American Politics, Edited by B. W. Hawkins and R. A Lorinskas, Columbus, 1970; G. M. Greeley, Why they can't be like us? America's white ethnic groups. N. Y. 1971; M. Novak, The Rise of Unmeltable ethnics, N. Y., 1972; M. R. Levy and M. S. Fraus, The ethnic factor. How America's minorities decide elections, N. Y., 1972.

ձեռնության ծրագրի ծավալմանը, այն դիտելով որպես ԱՄՆ-ի համար Թուրքիայի ստրատեգիական դերի նսեմացման միջոց։ Ամերիկահայ համայնքում հանրապետականների ժողովրդականությանը զգալի չափով նպաստեց նաև Կալիֆորնիայի նահանգապետ, հանրապետական Ջ. Դեկմեջյանը։ Հատկանշական է, որ նախընտրական կամպանիայի ժամանակ հանրապետականների օգտին հիմնականում քվեարկում էին ամերիկածին հայերը, որոնք գտնվում են ամերիկյան սոցիալ-տնտեսական սանդղակի բարձր աստիճանի վրա։ Սրա պատճառն այն է, որ հանրապետականների՝ ներքին քաղաքականության բնագավառում առաջադրած խնդիրները բխում էին ԱՄՆ-ի միջինից բարձր հասույթ ունեցող մարդկանց շահերից։ 1987 թ. հոկտեմբերին Բոստոնի շքեղ հյուրանոցներից մեկում ի պատիվ Ջ. Դեկմեջյանի ամերիկահայ համայնքի առավել ազդեցիկ «Հայկական համագումար» կազմակերպությունը կազմակերպեց ընդունելություն, որին մասնակցեցին ավելի քան 1000 հայեր։ Հավաքին ներկա էին ԱՄՆ-ի փոխ-պրեզիդենտ Ջ. Բուշը, Ռ. Քենեդին, ծերակուտական Ռ. Դոլը և այլ պաշտոնական անձինք։ Ընդունելությունը քաղաքական կարևոր նշանակություն ուներ հանրապետականների և, մասնավորապես, Ջ. Բուշի համար, քանի որ Ջ. Դեկմեջյանի հրապարակային աջակցությունը նրան ապահովում էր հանրապետականներին հայ համայնքի որոշակի մասի ընտրական ձայները։ Ռ. Դոլը չթաքցրեց Ջ. Դեկմեջյանի և հայ համայնքի նշանավոր դեմքերի աջակցության կարևորությունը ընտրություններում[2]։ Ջ. Բուշի շահագրգռվածությունն էթնիկ ընտրությունների ձայների, մասնավորապես ամերիկահայերի ձայների և ամերիկահայերի ֆինանսական օժանդակության մեջ արտահայտվեց նրանում, որ նախընտրական կամպանիայի ժամանակ նա կտրուկ փոխեց իր դիրքորոշումը հայության համար կարևոր նշանակություն ունեցող Հայոց Եղեռնի ճանաչման հարցում։

Մինչև 1988 թ. մայիսը Ջ. Բուշը գտնվում էր ԱՄՆ-ի վարչակազմի առավել պահպանողական ուժերի ճամբարում, եթե ի նկատի ունենանք Հայոց Եղեռնի ճանաչման հարցը։ Նա խուսափում էր իրական անվանում տալ երիտթուրքական կառավարության կողմից 1,5 մլն հայության ընաջնջումը և տեղահանմանը, խուսափում էր օգտագործել Եղեռն բառն այդ առումով։ Սակայն իր նախընտրական կամպանիայի ընթացքում Կալիֆորնիա և մասնավորապես հայաշատ Ֆրեզնո այցելության ժամանակ նա «Եղեռն» բառով բնորոշեց Թուրքիայում 1915 թ. հայերի բնաջնջումը[3]։ Ակնհայտ է, որ Բուշի դիրքորոշման այսպիսի փոփոխությունը բացատրվում էր կուսակցական շահերով՝ ստանալ ԱՄՆ-ի խոշորագույն համայնքի նահանգապետի՝ հանրապետական Ջ. Դեկմեջյանի աջակցությունը։ Պրեզիդենտ ընտրվելուց հետո Բուշը ուժգին հակազդեցություն ցույց տվեց 1989 թ. կոնգրեսի քննարկմանը ներկայացված Հայկական հարցին ճանաչում տվող վերջին բանաձևին։

Ինչպես վերը նշվեց, ամերիկահայերի ընտրական ձայները և հայաշատ այս նահանգում ֆինանսավորումը նույնպես կարևոր էին պրեզիդենտության թեկնածուի համար։

Ինչպես ասվեց, նախընտրական կամպանիայի ժամանակ ամերիկահայ ընտրողների ձայները բաժանվեցին երկու կուսակցությունների թեկնածուների միջև։

ԱՄՆ-ի հայ համայնքում դեմոկրատական կուսակցության համակիրների թիվը բավական զգալի է։ Սա բացատրվում է մի շարք հանգամանքներով, և առաջին հերթին նրանով, որ դեմոկրատների հիմնական քաղաքական խաղաթուղթը «Մարդու իրավունքների պաշտպանության» դոկտրինան է։ Կարևորագույն հանգամանք է նաև այն, որ կոնգրեսում, այսպես կոչված, «Հայկական» բանաձևերի պաշտպանների մեծամասնությունը դեմոկրատ-կոնգրեսականներն ու ծերակուտականներն են։ Եվ, ընդհանրապես, ելնելով վերը նշված դոկտրինայից, դեմոկրատները Հայոց Եղեռնը համաամերիկյան չա-

[2] Նոր կյանք, 15. X. 1987։

[3] The Armenian Mirror-Spectator, 28. V. 1988.

փերով ճանաչում տալու ջերմեռանդ կողմնակիցներն են։ Ավանդաբար դեմոկրատների պլատֆորմը միշտ էլ գրավիչ է եղել ամերիկյան էթնիկ փոքրամասնությունների համար։ Դեմոկրատների սոցիալական ծրագիրը, որը բնութագրվում է կարիքավորներին պետական ավելի արդյունավետ օգնություն տրամադրելով, որոշ չափով դեպի դեմոկրատական կուսակցությունն է գրավում Մերձավոր ու Միջին արևելքից ԱՄՆ ներգաղթածների այն մասին, որը գտնվում է ամերիկյան հասարակության սոցիալական սանդղակի ցածր աստիճանների վրա։ Եվ, վերջապես, պետք է նշել, որ 1988 թ. նախընտրական կամպանիան ուներ մի որոշակի առանձնահատկություն։ ԱՄՆ-ի պատմության մեջ առաջին անգամ երկրի պրեզիդենտի աթոռն էր ակնկալում ուղղափառ, ազգությամբ հույն, դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ Մասաչուսեթս նահանգի նահանգապետ՝ Մայքլ Դուկակիսը։ Ամերիկահայ համայնքում նա լայն ժողովրդականություն էր վայելում Հայոց Եղեռնի նկատմամբ ունեցած դիրքորոշման շնորհիվ։ Ամերիկահայության համար զգացական մեծ նշանակություն ունի այն փաստը, որ ապրիլի 24-ի օրը Մասաչուսեթս նահանգում հայտարարված է Թուրքիայում իրականացված Հայոց Եղեռնի զոհերի հիշատակման օր։ Ամեն տարի այդ օրը Մասաչուսեթսի նահանգային շենքից, որի վրա փակցված է հայ զոհերի հիշատակի հուշատախտակը, Մ. Դուկակիսը դիմում է նահանգի հայությանը։ 1983 թ. Մ. Դուկակիսը դիմել է Թուրքիայի դեսպան Շոքրո Էլեկդաշին, հայտարարելով, որ թուրքական կառավարությունը բացահայտ ժխտում է Հայոց Եղեռնի իրողությունը։

Մ. Դուկակիսի այդ դիրքորոշումն առանձնապես ընդգծվեց 1988 թ. նախընտրական կամպանիայի ժամանակ։ Այսպես, օրինակ, նա հայտնեց, որ ԱՄՆ-ի պրեզիդենտ ընտրվելու դեպքում կաջակցի կոնգրեսում «հայկական» բանաձևերի ընդունմանը։ Նա մասնավորապես ասաց. «Մենք գիտենք, թե ինչ է պատահել հայերին. պատմաբանները գրել են այդ մասին։ Ամերիկյան պրեզիդենտները ի տարբերություն նրանց, ովքեր այսօր փորձում են մոռացության տալ փաստերը, անցյալում նշավակել են Հայոց Եղեռնը։ Ոչ մի կին և ոչ մի տղամարդ, որ արդարադատ է, երբեք չպետք է մոռանա 1915 թ. Հայոց Եղեռնը»[4]։

1988 թ. հունիսին Լոս-Անջելեսում անցկացված հանրային կարծիքի հարցումները մասնակիորեն հավաստում են մեր դատողությունները։ Չնայած այդ հարցումները մասնագիտական առումով լիարժեք չեն, դրանց շնորհիվ կարելի է որոշ պատկերացում կազմել Լոս-Անջելեսի հայ համայնքի անդամների ընտրական վարքագծի վերաբերյալ։ 300 հարցում ստացած անձանց 50 %-ն անգամ տեղյակ չէին, որ ԱՄՆ-ում անցկացվում է համազգային նախընտրական կամպանիա, 20 %-ը պատասխանեց, որ չի ուզում ներքաշվել ամերիկյան քաղաքականության մեջ, և ընդամենը 100 հոգի համաձայնվեց պատասխանելու տրված հարցերին։ Դրանց 80 %-ը, այսինքն՝ 80 հոգին արտահայտվեց Մ. Դուկակիսի օգտին, երբ հարց տրվեց, թե դեմոկրատական կուսակցության պրեզիդենտության թեկնածուներից որ մեկի համար կնախընտրեն քվեարկել։ 80 հոգուց 60 %-ը հայտնեց, որ իրենց ընտրությունը պայմանավորված է Հայկական հարցի նկատմամբ Մ. Դուկակիսի դրական դիրքորոշմամբ։

Դեմոկրատական կուսակցության մյուս թեկնածու Ջ. Ջեկսոնի համար քվեարկելու պատրաստ հայերի 40 %-ը Մերձավոր և Միջին արևելքից ներգաղթածներն էին, որոնք իրենց որոշումը բացատրեցին Ջ. Ջեկսոնի պաղեստինամետ դիրքորոշմամբ։

Այն հարցին, թե երկու թեկնածուներից՝ Ջ. Բուշից և Մ. Դուկակիսից, որ մեկի համար կնախընտրեին քվեարկել որպես ԱՄՆ-ի պրեզիդենտ, հարցմանը մասնակցածների 87 %-ը գերադասեց Մ. Դուկակիսին, պատճառաբանելով այդ նրա հույն ազգությամբ և, ուստի, հավանական հակաթուրքական դիրքորոշմամբ։ Սակայն, այն բանից հետո, երբ զանգվածային ինֆորմա-

[4] The Armenian Reporter, 12. XI. 1987.

ցիալի միջոցները Ջ. Դեկմեջյանին ենթադրաբար ներկայացրին որպես երկրի փոխպրեզիդենտի հավանական թեկնածուի, կրկին հարցում անցկացվեց։ Դրա արդյունքները տարբերվում էին նախորդից. այժմ արդեն գերադասությունը տրվում էր հանրապետականների թեկնածու Ջ. Բուշին։ Հարցմանը մասնակիցների 96 %-ը հանդես եկան հօգուտ Ջ. Բուշի թեկնածության[5]։

Այս հարցումները մեկ անգամ ևս հաստատում են մեր դատողություններն այն մասին, որ ամերիկահայերն ընդհանուր առմամբ աչքի են ընկնում պասսիվ ընտրական վարքագծով։ Թերի լինելով հանդերձ, այդ հարցումները նաև վկայում են, որ հայ էթնիկ խումբն ընտրությունների ժամանակ ձեռք է բերում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությամբ շահագրգռված խմբի նկարագիր։ Նախ և առաջ ընտրություններին ամերիկահայերի մասնակցությունը պայմանավորված էր թեկնածուների արտաքին քաղաքականության պլատֆորմով, նրանց շահագրգռվածությամբ (մասնավորապես այն երկրների նկատմամբ, ուր բնակվում է ստվար քանակությամբ հայություն)։ Ընդ որում, ամերիկահայերի ուշադրությունը բևեռված է ԱՄՆ-Թուրքիա հարաբերությունների ուղեծրում գտնվող հարցերին։ ԱՄՆ-ի պայմաններում, ուր թուրքական կառավարության աջակցությունը վայելող թուրքական համայնքը և զանազան թուրքամետ լոբբիստական կազմակերպություններ Հայոց պատմությունը խեղաթյուրելու կամպանիա են ծավալել, Հայկական հարցի լուծումը ամերիկահայության համար ձեռք է բերում առանձին կարևորություն։ Ինչպես հայտնի է, Թուրքիայի կառավարությունը, օգտվելով ՆԱՏՕ-ի գծով ԱՄՆ-ի կարևորագույն ստրատեգիական գործընկերոջ իր շահութաբեր դիրքից, չի խորշում ԱՄՆ-ի կառավարող շրջանների վրա քաղաքական շանտաժի մեթոդներով ճնշում գործադրելուց։ Այդ են վկայում, օրինակ, քաղաքական և բարոյական ճնշման այն մեթոդները, որ Թուրքիայի ղեկավար շրջանները գործի են դնում ԱՄՆ-ի օրենսդրական և գործադիր մարմինների վրա, երբ կոնգրեսը փորձում է օրինականացնել ապրիլի 24-ի օրը, միջոցառում, որն ունի լոկ խորհրդանշական իմաստ և նշանակություն։ Ընդ որում, ամերիկահայերին մեղադրանք է ներկայացվում, թե իբր նրանք հակապետական գործողություն են ծավալում ԱՄՆ-ում, քանի որ աջակցում են ԱՄՆ-ի թշնամիներին՝ խորհրդային Միությանը և սոցիալիստական մյուս երկրներին։ Վերջին տարիներին ԱՄՆ-ում թուրքական համայնքի մի շարք կազմակերպություններ թուրքական կառավարության անմիջական ֆինանսական օժանդակությամբ ծավալել են լայն լոբբիստական կամպանիա՝ ճնշում գործադրելու կոնգրեսի և Սպիտակ տան վրա՝ կասեցնելու ամերիկյան կառավարության որևէ փորձ՝ ճանաչում տալու Հայոց ցեղասպանությանը։ «Այսօր՝ 1987 թ., ծավալված է ֆինանսական մեծ ծախսեր պահանջող լոբբիստական կամպանիա, որի նպատակն է աղավաղել պատմական փաստաթղթերով հաստատված իրողությունը և ջնջել այն մեր հիշողությունից»[6],—անդրադառնալով թուրքական կառավարության գործողություններին Հայոց եղեռնի փաստը ժխտելու գործում, կոնգրեսում հայտարարել է կոնգրեսական Հովարդը։

Հակահայկական լոբբիստական գործունեություն են իրականացնում ԱՄՆ-ի թուրք համայնքի մի քանի կազմակերպություններ, այդ թվում իրեն իթթիհատականների արժանի ժառանգորդ համարող «Ուսանողական միությունը» և «Թուրքագիտական ուսումնասիրությունների ինստիտուտը» Վաշինգտոնում։ 1982 թ. հիմնադրվեց «Թուրք-ամերիկյան ասոցիացիաների համագումարը» Վաշինգտոնում, որի հիմնադրամը եղավ երեք միլիոն դոլլար։ Այս կազմակերպություններն անմիջական քաղաքական հրահանգներ և ֆինանսավորում են ստանում Անկարայից։ 1982 թ. Անկարայում Թուրքիայի պրեմիեր-մինիստր Ջ. Էվրենի հետ հանդիպման ժամանակ թուրք-ամերիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների պատվիրակության ղեկա-

[5] The California Courier, 2. VI. 1988.
[6] The Armenian Reporter, 14. VI. 1984.

վար Ի. Իլքերը հայտարարեց, որ ԱՄՆ-ի թուրքական լոբբին թեև երիտասարդ է, սակայն շատ ազդեցիկ է, քանի որ լոբբիստական գործունեության ակտիվիստները նշանավոր ամերիկացիներ և թուրք-ամերիկացիներ են։ Նա այնուհետև ավելացրեց, որ ԱՄՆ-ում թուրքերի թշնամիները հիմնականում հայերն են[7]։

Թուրքերն ԱՄՆ-ում անց են կացնում լայն չափերի պրոպագանդիստական արշավ՝ մշակելու ամերիկյան հասարակության կարծիքը ի վնաս Հայոց Եղեռնի պատմական փաստի։ Զավեշտի հասնող համառությամբ թուրք-ամերիկյան մի շարք կազմակերպություններ և նրանց աջակցող թուրքական կառավարությունը կարծես անտեսում են, որ ամերիկյան հասարակությունը քաջ ծանոթ է Հայոց Եղեռնը վկայող մի շարք կարևոր փաստերի։ Այդպիսիք են Միացյալ Նահանգների, Ավստրիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի պետական արխիվներում գտնվող փաստաթղթերը։ ԱՄՆ-ի արխիվներում կա այդ հարցին նվիրված 20000 փաստաթուղթ[8]։ ԱՄՆ-ի կոնգրեսի 54-րդ և 66-րդ նստաշրջանները նշավակել են Եղեռնը, 1920 թ. մայիսի 13-ին ԱՄՆ-ի կոնգրեսի ծերակուտականների պալատը հաստատել է, որ իսկապես Թուրքիայում հայերի նկատմամբ իրականացվել է Եղեռն։ 1913—1916 թթ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն և արևմտյան այլ պետությունների բարձրաստիճան պաշտոնյաներ նույնպես վկայել են այդ փաստը[9]։ 1915—1930 թթ. ընթացքում ամերիկյան կառավարությունը Մերձավոր արևելքի օգնության կոմիտեի միջոցով նպաստներ է տրամադրել Եղեռնի զոհերին[10] և Եղեռնից փրկված 130000 հայ որբեր ամերիկացիների կողմից վերը նշված կազմակերպության միջոցով որդեգրվել են[11]։ Չնայած այս փաստերի անժխտելիությանը, թուրքերն ԱՄՆ-ում օգտագործելով մասսայական լրատվության միջոցները, հայերի նկատմամբ իրականացված ոճրագործությունը ներկայացնում են որպես «դարի մեծագույն խաբեություն»։ 1985 թ. մայիսին «Վաշինգտոն թայմզ», «Նյու Յորք թայմզ» և «Վաշինգտոն փոստ» թերթերում 69 գիտնականների ստորագրությամբ տպագրվեց թուրք-ամերիկացիների ասոցիացիայի համագումարի նամակը, որը փորձում էր հերքել Հայոց Եղեռնի փաստը։ Ամերիկյան կոնգրեսի նստաշրջաններից մեկում հանդես եկած կոնգրեսականներն ապացուցեցին, որ այդ 69 գիտնականներից միայն 8-ն էին XX դ. Թուրքիայի պատմության մասնագետ և որ նրանից միայն 4-ն էին զբաղվել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայի վարած ներքին քաղաքականությամբ։ Ավելին, պարզվեց, որ այդ գիտնականներից 40-ը պարզապես կաշառված էր Վաշինգտոնում գտնվող թուրքագիտական ուսումնասիրությունների և Անկարայի ամերիկյան ուսումնասիրությունների ինստիտուտների կողմից[12]։

Թուրքական ազգայնամոլական պրոպագանդը հին ավանդույթներ ունի թե ԱՄՆ-ում և թե Թուրքիայում։ Թուրքական կառավարությունը ֆինանսավորում է ոչ միայն հակահայկական պրոպագանդիստական արշավը ԱՄՆ-ում, այլև հակահայկական լոբբիստական գործունեությանը կոնգրեսում և ԱՄՆ-ի կառավարական այլ մարմիններում։ ԱՄՆ-ում թուրքական դեսպանատան միջոցով Թուրքիայի կառավարությունը գումարներ է տրամադրում ամերիկյան այնպիսի ֆիրմաների, ինչպիսիք են «Դոնենս և քոմփանին», «Գրեյ և քոմփանին»։ 1983 թ. թուրքական կառավարությունը վարձել է «Գրեյ և քոմփանի» ֆիրման՝ տարեկան վճարելով նրան 600000 դոլլար՝ լոբբիստական գործունեություն ծավալելու ամերիկյան կոնգրեսում և աջակցելու Թուրքիայի դեսպան Շ. Էլեկդաշին[13]։ Չնայած ֆիրմայի լոբբիստական ծրագիրը բավական

---

7 Հայրենիք, 19. VI. 1982։

8 Congressional Record—House, H 2293.

9 Նույն տեղում, H 2294, 2295։

10 Նույն տեղում, H 2295։

11 The Armenian Reporter, 20. IX. 1984.

12 Congressional Record—House, H 2295.

13 Նույն տեղում, H 2308։

ընդարձակ էր և նպատակամղված՝ ճնշում գործադրելու կոնգրեսի վրա ի նպաստ Թուրքիային ամերիկյան ռազմական և տնտեսական օժանդակություն ցույց տալուն, այն վերածվեց հակահայկական լոբբիզմի։ Լոբբիստական լայն գործունեություն են ծավալում նաև ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանության աշխատակիցները և, մասնավորապես, դեսպան Շ. Էլեկդաշը։ Ամերիկյան կոնգրեսի անդամների վրա գործադրելով քաղաքական ճնշման բոլոր մեթոդները, թուրքական լոբբիստներն առաջին հերթին փորձում են ամեն կերպ կասեցնել որևէ առաջխաղացում՝ ԱՄՆ-ում Հայոց Եղեռնի ճանաչման գործում։ Այսպես, օրինակ, կոնգրեսի № 132 հայկական բանաձևի ընդդիմախոսներից մեկը՝ նախկին կոնգրեսական Ջ. Մուգին (1988 թ. ընտրություններում նրան չհաջողվեց վերընտրվել) իր իսկ խոստովանությամբ թուրքական լոբբիի ճնշման տակ գործուն կերպով մասնակցել է կոնգրեսում բանաձևի խափանմանը[14]։ ԱՄՆ-ում թուրքական լոբբին օգտագործում է բոլոր միջոցները՝ թուլացնելու ամերիկահայերի քաղաքական ազդեցությունը, սեպ խրելու հայ էթնիկ խմբի և ԱՄՆ-ի այլ էթնիկ խմբերի, մասնավորապես ամերիկահայերի և ամերիկայի հրեաների միջև։

Այս պայմաններում ամերիկահայ համայնքի, որպես ամերիկյան հասարակության շահագրգռված խմբի, քաղաքական գործունեությունը ձեռք է բերում առավել կարևոր նշանակություն։ Դրա հետ անմիջապես առնչվում է այն, որ ԱՄՆ-ի հայ համայնքի ավանդական էթնիկ հասարակությունները իրենց գործունեությունն ուղղում են ոչ միայն ամերիկյան հասարակության կողմից Հայոց Եղեռնը ճանաչելուն, այլև ամերիկահայ համայնքի քաղաքական պահանջներն ամերիկյան կառավարությանը ներկայացնելուն։ Այդ ուղղությամբ է գործում ամերիկահայ համայնքի համար նոր տեսակի կազմակերպությունը՝ «Հայկական համագումարը», որն ըստ էության լոբբիստական կազմակերպություն է և գործում է ի շահ ամերիկահայության։

Ամերիկահայ համայնքի համար վերջին տասնամյակներում բնորոշ և նոր երևույթ է այն, որ ամերիկահայությունը, ընկալելով ամերիկյան քաղաքական մեխանիզմի գործունեության օրինաչափությունները, փորձում է մասնակցել ԱՄՆ-ի քաղաքական պրոցեսին։ Նախընտրական կամպանիայի հենց սկզբում ստեղծվեցին վերը նշված պրեզիդենտության թեկնածուներին աջակցող կոմիտեներ, որոնց նպատակն էր ոչ միայն ամբողջ երկրով մեկ «հավաքել» հայերի ընտրական ձայները հօգուտ թեկնածուների, այլև նրանց օգտին կազմակերպել հանգանակություններ։ Օրինակ՝ ամերիկահայերի քաղաքական գործողությունների կոմիտեն, որը ստեղծվեց Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահի տեղակալ Լուիզ Սիմոնի և Նյու-Յորքի նահանգային ղեկավար մարմիններից մեկի պաշտոնյա Ռ. Թոմբեկչյանի նախաձեռնությամբ։ Այս կազմակերպության նպատակն էր ֆինանսավորել այն թեկնածուների ընտրական կամպանիան, որոնք աջակցում են ամերիկահայերի քաղաքական պահանջների բավարարմանը։ 1987 թ. հոկտեմբերին ստեղծվեց «Դեկմեջյան» ֆոնդը, որը նույնպես պետք է ֆինանսական աջակցություն ցույց տար այն ամերիկահայերին, որոնք առաջ են քաշում իրենց թեկնածուներին մասնակցելու համազգային և տեղական ընտրություններին[15]։ Այս ֆոնդը ստեղծված է հայ խոշոր ձեռնարկատերերի՝ Ալեք Մանուկյանի, Է. Մարտիկյանի, Հովնանյան եղբայրների, Ք. Մուգարի և ուրիշների նվիրատվությամբ։ 1982 թ. և 1986 թ. Ջ. Դեկմեջյանի ընտրության և վերընտրության համար հանգանական գումարների 20 %-ը ամերիկահայերի նվիրատվությունն էր[16]։

Վերջին տարիները ամերիկահայերի քաղաքական կյանքում հատկանշական են այն բանով, որ նրանցից շատերը փորձում են ուժեղացնել իրենց դիրքերն ԱՄՆ-ի պետական և քաղաքական համակարգում։ Ինչպես նահան-

---

[14] The California Courier, 25. VI. 1988.

[15] The Armenian Reporter, 15. X. 1987.

[16] Նոր կյանք, 15. X. 1987։

գային, այնպես էլ ֆեդերալ ղեկավար մարմիններում երեան են գալիս ազգությամբ հայ քաղաքական և պետական գործիչներ։ Կոնգրեսական հանրապետական Ջ. Փաշայանը, որը վերընտրվեց 1988 թ., Կալիֆորնիայի նահանգի ֆեդերալ դատարանի գլխավոր դատավոր Տ. Թերիդյանը, Կալիֆորնիայի նահանգի նահանգապետ Ջ. Դեկմեջյանը, Մասսաչուսեթս նահանգի ներկայացուցչական պալատի խոսնակ Դ. Քեերյանը, Նյու-Ջերսի նահանգի ներկայացուցչական պալատի հանրապետական մեծամասնության ղեկավար Ջ. Հայտայանը, Կոննեկտիկուտ նահանգի մունիցիպալիտետի քարտուղար Դ. Թաշլյանը, պրեզիդենտ Նիքսոնի և պրեզիդենտ Ռեյգանի ճառագիր Ք. Խաչիկյանը, Լոս-Անջելեսի քաղաքապետի գլխավոր քաղաքական խորհրդատու Ֆ. Դեպոլանը, «Բոստոն Գլոբ» թերթի Վաշինգտոնի բյուրոյի ղեկավար Ա. Քյուրքչյանը, «Լոս-Անջելես հերալդ էկզամիներ» թերթի խմբագիրներից մեկը՝ Թ. Մանջիկյանը և շատ ուրիշներ միևնույն ժամանակ մնում են ամերիկահայ համայնքի ակտիվ գործիչներ։

Պետք է ասել, որ ամերիկյան կոնգրեսականների և ծերակուտականների գրասենյակներում, ինչպես նաև Սպիտակ տանը, ԱՄՆ-ի պետական դեպարտամենտում ու զանգվածային լրատվության ասպարեզում աշխատում են երիտասարդ հայ մասնագետներ։ 500-ի է մոտենում ազգությամբ հայ այն երիտասարդ մասնագետների թիվը, որոնք 1973 թ. սկսած, վերը նշված «Հայկական համագումար» կազմակերպության հատուկ ծրագրի օգնությամբ յուրաքանչյուր ամառ փորձառության ծրագիր են անցնում ԱՄՆ-ի հասարակական և քաղաքական կյանքի ղեկավարման կարևորագույն մարմիններում և, այսպիսով, պատրաստվում դառնալ ԱՄՆ-ի հասարակական և քաղաքական գործիչներ, չմոռանալով, սակայն, իրենց ազգային արմատները։

Վերը խոսվեց այն մասին, որ ԱՄՆ-ի հայ համայնքը ձեռք է բերում երկրի շահագրգռված խմբի նկարագիր և որ համայնքի շահագրգռվածությունն առաջին հերթին վերաբերում է ԱՄՆ-ի վարած արտաքին քաղաքականությանը։ Թե ընդհանուր առմամբ ինչպիսին է ամերիկահայերի դիրքորոշումը երկրի արտաքին քաղաքականության վերաբերյալ, կարելի է դատել այդ հարցի նկատմամբ «Հայկական համագումարի» ծրագրով՝ նպաստել խորհրդա-ամերիկյան հարաբերությունների բարելավմանը, ԱՄՆ-ի ֆինանսական աջակցությանը Մերձավոր արևելքին, մասնավորապես Լիբանանին[17]։

Ամերիկահայերի դիրքորոշումը երկրի վարած ազգային քաղաքականության վերաբերյալ բնութագրվում է Սիրիայում ԱՄՆ-ի դեսպան՝ Էդ. Ջիրեջյանի խոսքերով. «Խորհրդա-ամերիկյան հարաբերությունների բարելավման և զարգացման հետ համընթաց կբարելավվեն հարաբերություններն ամերիկահայ համայնքի և Խորհրդային Հայաստանի միջև»[18]։

Կարևորագույն դրդապատճառը, որ խթանեց ամերիկահայերի ակտիվացումը երկրի քաղաքական կյանքում, այն է, որ ԱՄՆ-ում իշխանության բարձրագույն մարմիններն իրենց հերթին շահագրգռված են ամերիկահայերի քաղաքական ակտիվացման մեջ, քանի որ այս համայնքն աջակցում է հանրապետականների վարչակազմի բռնած խորհրդա-ամերիկյան հարաբերությունների բարելավման կուրսին։ Իրոք, ամերիկահայ հասարակական և քաղաքական գործիչները և խոշոր ձեռնարկատերերը ըստ ամենայնի կարող են իրենց ներդրումն ունենալ խորհրդա-ամերիկյան հարաբերությունների բարելավման գործում։

---

[17] 1987 թ. «Հայկական համագումարի», «Հայ ընդհանուր բարեգործական միության», և «Հայ ազգային կոմիտեի» միասնական ջանքերով Միջազգային զարգացման գործակալությունը երկու անգամ 500000 դոլլար օգնություն է տրամադրել Լիբանանի հայաշատ շրջաններին։

[18] The Armenian Oerves-br. 28. X. 1987.

АРМЯНСКАЯ ОБЩИНА США В ПОЛИТИЧЕСКОЙ ЖИЗНИ СТРАНЫ (1980-е годы)

М. Г. ТЕР-ГРИГОРЯН

Резюме

Политичеокое поведение армян в США характеризуется рядом особенностей, связанных с исторической судьбой армянского народа—геноцидом армян, а затем массовым выселением 1915—25 гг. с территории исторической родины, что стало причиной формирования армянской общины США. Политическая активность армян в США сфокусирована в основном во внешнеполитической деятельности США, в частности в вопросе американо-турецких отношений. Эта позиция особенно ярко проявляется во время общенациональных выборов, когда политическая активность населения США может принести реальные плоды.

В последние два десятилетия в армянской общине США намечается тенденция к превращению ее этнокультурной общности в группу интересов американского общества.

THE ARMENIAN COMMUNITY OF THE USA IN THE POLITICAL LIFE OF THE COUNTRY (IN THE 1980 s).

M. G. TER-GRIGORIAN

Summary

The political behaviour of Armenians in the USA is characterized by a number of features associated with the historical destiny of the Armenian nation—genocide of the Armenians followed by the massive deportation of 1915—1925 from the territory of the historic parentland resulting in the origination of the Armenian community in the USA. The political activity of the Armenians in the USA is mainly concentrated on the rdomain of the USA foreign policy, on theissue of the American—Turkish elations in particular. This position is emp hatically highlighted during nation-wide election campaigns when the political activity of the USA population can bear fruit in terms of reality.

Within the last two decades underway in the USA Armenian community is a tendency to be transformed from an ethno-cultural entity into a group supporting the interests of the American society as a whole.